Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 111 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՎԱՉԵ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ՆՈՐ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

1.	Ծրագրի նպատակը	Մայր Աթոռ Սուրբ. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկեան» մատենադարանի հարակից հանրային տարածքում նախկին ոռոգման համակարգի, այդ թվում՝ 5000 գծ/մ խողովակի փոխարինում նորով, վնասված բույսերի փոխարինում նորով և խոտածածկ տարածքի վերականգնում, 2024 թվականի սեզոնային հողային աշխատանքների շրջանում տարածքի հողային, այգեգործական և բարեկարգման աշխատանքների ապահովում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղ. Էջմիածին, հոգևոր
6.	Ծրագրի բյուջեն	40,553,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Էջմիածին, ՀՎՀՀ՝ 04703401)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի մարտի 1-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Մայր աթոռ սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկեան» մատենադարանի հարակից հանրային տարածքի գոյություն ունեցող 5000 գծ/մ խողովակի փոփոխություն, կաթիլային ոռոգման նոր համակարգի անցկացում: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2024 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ 4,125,000 դրամի չափով: 2. Վնասված բույսերի փոխարինում նորով և խոտածածկ տարածքի վերականգնում: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2024 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ 18,428,000 դրամի չափով: 3. Հողային և բարեկարգման սեզոնային աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի մարտի 1-ից մինչև նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 18,000,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. 5000 գծ/մ խողովակի փոփոխություն, կաթիլային ոռոգման նոր համակարգի անցկացում՝ 4,125,000 դրամ: 2. Վնասված բույսերի փոխարինում նորով և խոտածածկ տարածքի վերականգնում՝ 18,428,000 դրամ: 3. 9 ամիս տևողությամբ սեզոնային հողային և այգեգործական աշխատանքների շրջանում հանրային տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ 18,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար լրացուցիչ կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Մայր աթոռ սուրբ Էջմիածին, Էջմիածնի համայնքապետարան

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀԲԸՄ կողմից մշակված ծրագրի արդյունավետության գնահատման գործիքակազմի կիրառում: Ֆինանսական և նկարագրային հաշվետվություններ են ներկայացվում Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչությանը: ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

12.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ